ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Վահե Սարգսյանի «Վանի թագավորության պատմության հիմնահարցերը Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի աշխատություններում (Ք.ա. XIII-VI դդ.)» խորագրով, է.00.05. «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Նախևառաջ կուզենայի նշել ատենախոսության թեմայի ընտրության կարևորությունը: Ուրարտագիտությունը սկզբնավորվել է 1840 թ., երբ հրապարակվեց Ֆր. Էդ. Շուլցի "Mémoire sur le lac de Van et ses environs" աշխատությունը: 1840-1890-ական թթ. ուրարտագիտությունը հիմնականում զարգանում էր բանասերների կողմից, որոնց համար առաջնային էր ուրարտերեն լեզվի և արձանագրությունների ուսումնասիրությունը:

Ուրարտական հուշարձանների առաջին հնագիտական ուսումնասիրությունները սկսվեցին Թոփրակ-Կալեի (Ռուսախինիլիի) պեղումներով, որտեղ և իր հնագիտական աշխատանքները սկսեց Լեհման Հաուպտը: Նրա հիմնարար աշխատանքներով են սկսվում Վանի թագավորության պատմության, պատմական աշխարհագրության, արվեստի, ճարտարապետության, պաշտամունքի և այլ բնագավառների ուսումնասիրությունները, որոնք երկար ժամանակ ուղեցույց էին Ուրարտուի պատմությունն ու մշակույթն ուսումնասիրող գիտնականների համար: Եվ, ահա, ատենախոսության հեղինակը մանրամասն անդրադառնում և քննարկում է հիշատակված այդ բնագավառները՝ ցուցադրելով բարձր մասնագիտական պատրաստվածություն և մեծանուն գիտնականի տեսակետներն ու մոտեցումները համադրում է Լեհման-Հաուպտին ժամանակակից և հաջորդած նոր ուսումնասիրությունների հետ: Արդյունքում մենք ունենք մի նոր աշխատանք՝ նվիրված Վանի թագավորության և վաղ հայկական շրջանի նախնական փուլի պատմությանը:

Աշխատանքը կազմված է Ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը ու գիտական նորույթը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակները ու խնդիրները, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը և մեթոդաբանությունը: Ներածությունը ավարտվում է գրականության և աղբյուրների տեսությամբ:

Գլուխ I-ը վերնագրված է «Ասորեստանի արշավանքները Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XII-IX դդ.»: Կենտրոնացված պետության ձևավորումը»: Այս գլխում հեղինակը քննարկում է Լեհման-Հաուպտի ասորեստանյան այն արձանագրությունները, որոնք առնչվում են Հայկական

Сканировано с CamScanner

լեռնաշխարհի աշխարհագրությանը և բնակիչներին: Քննարկվում են մինչ այժմ ամբողջովին չպարզաբանված խնդիրներ, որոնք առնչվում են լեռնաշխարհի հարավում ձևավորված Ուրուատրի, Նաիրի երկրների տեղադրությանը և վարչաքաղաքական կառուցվածքին՝ բերելով Լեհման-Հաուպտի տեսակետները և մինչ այժմ եղած կարծիքներն այս խնդրի վերաբերյալ: Մանրազնին ուսումնասիրված են այն հնարավոր ճանապարհները, որոնցով անցել են ասուրական բանակները դեպի Ուրատրի, Նաիրի և Ուրարտու արշավելիս: Հատուկ ուշադրություն է դարձված Տիգրիս գետի թունելի նկարագրությանը և այնտեղ ու մերձակայքում առկա ասուրերեն արձանագրություններին ու արքաների բարձրաքանդակներին: Ատենախոսը համաձայն է Լեհման-Հաուպտի արտահայտած այն մտքին, որ Տիգրիսի թունելը սկսած Ք.ա. 12-րդ դարից ասորեստանցիների կողմից ընկալվել է որպես սրբավայր: Այստեղ, ատենախոսը, առանձին ենթագլխով, անդրադառնում է Վանի թագավորության կազմավորման խնդրին, որը, նույնպես, մինչ այժմ քննարկումների առարկա է: Նա համաձայն է Լեհման Հաուպտի այն մտքին, որ Տուշպա-Վանը որպես վարչաքաղաքական կենտրոն գոյություն ուներ մինչև Սարդուրի I-ի վերակառուցումները: Կարող եմ ասել, որ բացի ասուրական արձանագրություններից, այս մասին է վկայում այն հանգամանքը, որ Տուշպան արևի աստված Շիվինիի պաշտամունքային կենտրոնն էր, իսկ Վանա լիճը, ըստ հայկական և խեթական սկզբնաղբյուրների, այն վայրն էր, որտեղ ծագել և մայր է մտել արեգակը:

Երկրորդ գլուխը կրում է «Բիայնիլի-Ուրարտուի վերելքը» վերնագիրը: Այս գլխում քննվում է Իշպուինի և Մինուա արքաների գործունեությունը: Ռազմաքաղաքական պատմությանը զուգահեռ, հեղինակը կարևորել է Լեհման-Հաուպտի կատարած ուսումնասիրությունները կապված ջրաշինարարական աշխատանքների հետ Ուրարտուում: Մանրամասն նկարագրված է Մինուայի ջրանցքը (Շամիրամի առու), հոսքի ուղղությունը, հենապատերն ու կամուրջները, որոնց վրայով անցել են Հայոց Ձորից բխող աղբյուրների ջրերը:

Լեհման Հաուպտը շեշտում էր, որ Մինուայի ջրանցքը աշխարհի ամենակարևոր հուշարձաններից է, քանի որ մինչև այժմ օգնում է մարդկանց: Այս գլխում կարևոր ուշադրության է արժանացրած Լեհման-Հաուպտի այն մոտեցումները, որոնք առնչվում են Մուծաթիրի տաճարի տեղադրությանը, հիմնադրման հետ կապված խնդիրներին և ճարտարապետական առանձնահատկություններին, ինչը կարևոր է, քանի որ Լեհման-Հաուպտի, Հերցֆելդի և Բորիս Պիոտրովսկու կարծիքով Մուծաթիրի տաճարի հորինվածքը կարող էր ազդեցություն ունենալ հունական դասական տաճարաշինության վրա:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը վերնագրված է «Վանի թագավորությունը որպես Առաջավոր Ասիայի հզորագույն պետություն»: Այստեղ հեղինակը անդրադառնում է Լեհման-Հաուպտի այն տեսակետներին, որոնցով պայմանավորված էր այդ վերելքը՝ մասնավորապես

Сканировано с CamScanner

Արգիշթիի և Սարդուրի II-ի արշավանքները դեպի հյուսիս և հարավ, քաղաքաշինությանը և ջրանցքաշինությանը: Ուրարտուի վերելքը պայմանավորված էր նաև Ասորեստանում քաղաքական իշխանության թուլացման հանգամանքով: Վանի թագավորության թուլացումը Սարդուրի Արգիշթիորդու գահակալության վերջին տարիներին, պայմանավորված էր ոչ թե Ուրարտուի ռազմաքաղաքական թուլացմամբ, այլ, ընդհակառակը, Սարդուրիի օրոք այն հասնում է իր հզորության գագաթնակետին և Վանի թագավորության ազդեցությունը տարածվում է համայն Հյուսիսային Ասորիքի վրա: Սարդուրի II-ի պարտությունները պայմանավորված էին Ասորեստանում քաղաքական ճգնաժամի ավարտով, Թիգլաթպալասար III արքայի ձեռնարկած ռեֆորմների արդյունքում: Թիգլաթպալասար III-ը պարտության մատնեց Սարդուրիին և իր դաշնակիցներին Սիրիայում, իսկ հետո արշավեց մինչև Տուշպա:

Գլուխ III-ը վերնագրված է «Վանի թագավորության թուլացումն ու անկումը. Հայաստանը Ք.ա. VI դարում» և սկսվում է «Ուրարտուի և Ասորեստանի պայքարը Ռուսա Սարդուրորդու օրոք» ենթագլխով:

Ռուսային, Սարդուրիի պարտություններից հետո, այնուամենայնիվ, հաջողվում է վերամիավորել երկիրը: Հետաքրքիր է, որ այս մասին նա արձանագրություն է թողել Մուծաձիրում իրեն ռազմակառքով և կառապանով պատկերող արձանախմբի վրա: Սրան մանրամասն անդրադարձել է Լեհման-Հաուպտը՝ ենթադրելով, որ այն վիպական բանավոր ստեղծագործության արգասիք է: Լեհման-Հաուպտը Սարգոն II արքայի արշավանքը դեպի Ուրարտու պայմանավորում է 714 թ. սկսված կիմերական արշավանքներով դեպի Ուրարտու՝ երկրի հյուսիսից: Սարգոն II-ի արշավանքը հաջող էր, քանի որ Ուաուշ լեռան վրա ուրարտական բանակը պարտություն կրեց, սակայն Սարգոնը չարշավեց դեպի Վան, այլ գրավեց ու թալանեց Մուծաձիրի Ուրզանա արքայի պալատը և Խալդի աստծո տաճարը, ինչի պատճառով Ռուսան ինքնասպանություն գործեց: Ենթադրվում է, որ մինչ այդ, Ռուսա Սարդուրորդին մասնակցել էր հոր սպանությանը, ինչպես նաև հանուն պետության գոյության մահապատժի էր ենթարկել որդուն՝ Մելարտուային: Լեհման-Հաուպտի կարծիքով Ռուսա Սարդուրորդի արքայի Ասորեստանից կրած պարտությամբ, սկսվում է Վանի թագավորության անկումը: Ըստ մեկ այլ տեսակետի՝ Հայկական լեռնաշխարհի «երկրները» միավորվում են երկրի կենտրոնի շուրջ և հենց այս ժամանակ, ինչպես գտնում էին Գ. Ա. Տիրացյանը և Գ. Ե. Արեշյանը, հաղթահարվում է մինչ այդ ձևավորված մշակութային անտագոնիզմը լեռնաշխարհում: Այս տեսակետին, սակայն, հեղինակը չի անդրադարձել: Ք. ա. VI դարի Հայաստանի պատմությունը Լեհման-Հաուպտը քննարկում է՝ հենվելով հիմնականում Դարեհ I արքայի Բեհիսթունյան արձանագրությանը և Քսենոփոնի Կյուրոպեդիա և Նահանջ բյուրոց երկերին:

Сканировано с CamScanner

III գլխում առանձնակի ուշադրություն է դարձված Լեհման-Հաուպտի առաջ քաշած միգրացիոն տեսությանը: Ատենախոսն այստեղ անճշտություններ է գտնում արմենների նախնական գոյատևման Հաուպտի առաջարկած վայրին, ինչի պատճառով և նշում է այս մոտեցման անհավանականությունը:

Եզրակացությունում ամփոփված են աշխատանքի հիմնական դրույթները:

Գրականության ցանկը հարուստ է, հղված է 381 հրապարակում, ընդգրկված են Լեհման-Հաուպտի Վանի թագավորությանը և Հայաստանին առնչվող բոլոր աշխատությունները, ինչպես նաև մեծանուն այս գիտնականի հետազոտություններին ածանցվող բազմաթիվ հրապարակումներ:

Դիտողություններ

Ունեմ մի քանի դիտողություններ, որոնք ցանկության դեպքում կարելի է ընդգրկել ապագայում գրքի տեսքով:

1. Կառաջարկեի, որ ատենախոսությունում առաջարկվող Լեման-Հաուպտի անձնանունը գրվեր Լեհման-Հաուպտ ձևով՝ «Հ» տառի ավելացմամբ:
2. Լեհման-Հաուպտի և Վ. Բելքի յուրաքանչյուր հոդված անմիջապես թարգմանվում էր հայերեն և հրապարակվում «Բազմավէպ», «Հանդես ամսօրյա» և «Արարատ» հանդեսներում, քանի որ հայ գիտական հասարակությունը այդ ժամանակ լավ ծանոթ էր Հայոց պատմությանը, բայց անծանոթ էր Ուրարտուի պատմությանը, մշակույթին և հնագիտությանը: Եվ, երբ գժտվեցին Բելքն ու Լեհման-Հաուպտը, ընթերցողները մեծ անհանգստություն էին արտահայտում՝ տարակուսելով, որ կընդհատվի գիտելիքների այն աղբյուրը, որ գալիս էր այս մեծ գիտնականների գործունեության արդյունքում: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ անդրադարձ կատարվեր նաև նշված երկու գիտնականների՝ հայագետների վրա ունեցած ազդեցությանը:
3. Բիայնիլի-Վան համադրությունը կատարել է դեռևս Ա.Դ. Մորդտմանը 1870-ական թթ., բայց ինչպես նշում է ատենախոսը Վանի թագավորություն հասկացությունը առաջարկել է հենց Լեհման-Հաուպտը: Մեզանում առաջինը Լեոն էր, որ օգտագործեց Վանի թագավորություն հասկացությունը, և հենց նա էր, որն իր 1915 թ. լույս տեսած Վանի թագավորություն գրքում, լայնորեն կիրառեց Լեհման-Հաուպտի հեղինակած աշխատությունները՝ մասնավորապես նրա "Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens" աշխատությունը: Ցանկալի կլիներ, որ այս մասին նշվեր տեքստում:

Сканировано с CamScanner

4. Լեհման-Հաուպտն իր՝ "Armenien, einst und jetzt" աշխատությունում հանգամանարոն անդրադառնում է նաև Նորագույն Հայաստանի պատմությանը և իրողություններին: Կարծում եմ, որ կարելի էր հակիրճ անդրադառնալ այս հանգամանքին:

Կատարված այս նկատառումները չեն նվազեցնում աշխատանքի արժեքը:

Ատենախոսությունը շարադրված է բարձր գիտական մակարդակով և գրագետ հայերենով: Վահե Սարգսյանը ցուցաբերել է թեմայի խոր և բազմակողմանի ուսումնասիրություն. Մանրակրկիտ քննության են ենթարկված Ուրարտուի և վաղ հայկական շրջանի Հայաստանի պատմությանն առնչվող հիմնարար խնդիրները՝ ժամանակակից գիտական մոտեցումների և արդի հետազոտությունների արդյունքների համատեքստում: Ելնելով վերոգրյալից՝ կառաջարկեի Վահե Սարգսյանի ատենախոսության հրապարակումը առանձին գրքի տեսքով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Պաշտոնական ընդդիմախոս Սիմոն Հմայակյան, պ.գ.թ., դոցենտ

Պ.գ.թ., դոցենտ Սիմոն Հմայակյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Գիտական քարտուղար Աստղիկ Բաբաջանյան, պ.գ.թ.

12.02.2026 թ.

Сканировано с CamScanner